ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 սեպտեմբերի 2025թ.

ժամը 14:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Տարոն Վարդանյան

Անդամներ՝ Արսեն Գասպարյան, Հայկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

**1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման մասին**

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը հայտարարվել է 26.08.2025թ.-ին, իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 08.09.2025թ-ին ժամը 11:00-ին, էլեկտրոնային աճուրդը սկսվել է 09.09.2025թ.-ին ժամը 11:00-ին:

**2. Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին**

2.1 Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակից «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի դիմում-հայտարարությունում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը և հրավերի 4.3 կետի 1-ին մասի ե/ ենթակետով սահմանված հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայք էջի հղումը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր դաշտի տեխնիկական բնութագիր սյունակներում ինֆորմացիայի փոխարեն դրված են գծիկներ, ուստի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Վերոնշյալ մասնակիցը սահմանված ժամկետում չէր շտկել անհամապատասխանությունը, ուստի հանձնաժողովը որոշեց՝ Մասնակից՝ «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

**3. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակցին որոշելու և հայտարարելու մասին.**

3.1. Հիմք ընդունելով Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը և վերջնական գնային առաջարկները՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- N 4 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Զավեն Սիմոնյան» Ա/Ձ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. Ընթացակարգի չկայացած չափաբաժին հայտարարելու մասին**

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- NN 1,2,3,5 չափաբաժինները հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

### 5. Պայմանագիր կնքելու որոշման մասին.

5.1.Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

5.2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/51» ծածկագրով գնման ընթացակարգի համար "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5.3. Ընտրված՝ հաղթող, մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**Հանձնաժողովի նախագահ՝** ____________ **Տ. Վարդանյան**

**Քարտուղար** ____________ **Ն. Աբովյան**

**Անդամներ՝** ____________ **Ա. Գասպարյան**

____________ **Հ. Հովհաննիսյան**